

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 55/1

12 նոյեմբերի 2013 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով <Սիսիանի ճանշին> ՍՊԸ կողմից 13.09.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ-ին ուղղված դիմումի պահանջների կատարման պարտավորեցման պահանջի մասին գանգատ-բողոքը (այսուհետ նաև գանգատ) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

<Սիսիանի ճանշին> ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել գանգատ (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 23.10.2013 թ-ի թիվ 13436-13) ընկերության կողմից 13.09.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Գորիսի ՏՀՏ-ին ուղղված դիմումի պահանջների կատարման պարտավորեցման պահանջի մասին: Այնուհետև <Սիսիանի ճանշին> ՍՊԸ տնօրենը Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 11.11.2013 թ-ի դիմումով միջնորդություն է ներկայացրել, որով խնդրել է ընկերության գանգատը քննության չառնել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ <Սիսիանի ճանշին> ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

<Սիսիանի ճանշին> ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ